

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
2008 Թ. ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ
ԵՎ ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐ**

ԵՐԵՎԱՆ - 2008

**Հայաստանի Հանրապետության կառավարության
2008 թվականի գործունեության միջոցառումների ծրագրի և
գերակա խնդիրների մասին**

Սույն հրապարակմամբ ներկայացվում են ՀՀ կառավարության 2008 թվականի գործունեության միջոցառումների ծրագիրը և հանրապետական գործադիր մարմինների ընթացիկ տարվա գերակա խնդիրները: Այն պարունակում է 188 միջոցառում և 75 գերակա խնդիր:

Ծրագրում հստակ նշված են յուրաքանչյուր միջոցառման նպատակը, կատարման պատասխանատու մարմինը, ժամկետը և ֆինանսական ապահովման աղբյուրը, ինչն ավելի իրատեսական և վերահսկելի է դարձնում տարվա ընթացքում նախարարությունների, գերատեսչությունների կողմից իրականացվելիք միջոցառումները:

Կառավարության գործունեության միջոցառումների ծրագրի և գերակա խնդիրների կատարման ընթացքի նկատմամբ վերահսկողությունն իրականացնում է ՀՀ կառավարության աշխատակազմը:

Հասարակական վերահսկողություն իրականացնելու և լայն հրապարակայնություն ապահովելու նպատակով սույն ծրագիրը տեղադրված է նաև ՀՀ կառավարության պաշտոնական ինտերնետային կայքում (www.gov.am):

ՀՀ կառավարության աշխատակազմի
տեղեկատվության և հասարակայնության
հետ կապերի վարչություն

Տնտեսական բարեփոխումների
վերլուծական-տեղեկատվական կենտրոն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

29 նոյեմբերի 2007 թվականի N 1440 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2008 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ԵՎ ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Նախագահի 2007 թվականի հուլիսի 18-ի ՆՅ-174-Ն հրամանագրի 21-րդ, 22-րդ, 23-րդ և 25-րդ կետերին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**

1. Հաստատել՝

1) Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի գործունեության միջոցառումների ծրագիրը՝ համաձայն N 1 հավելվածի.

2) հանրապետական գործադիր մարմինների 2008 թվականի գերակա խնդիրները՝ համաձայն N 2 հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմի ղեկավար նախարարին՝ յուրաքանչյուր եռամսյակի ավարտից հետո 10-օրյա ժամկետում Հայաստանի Հանրապետության կառավարություն ներկայացնել տեղեկանք տվյալ եռամսյակում սույն որոշման N 1 հավելվածում նշված միջոցառումների իրականացման ընթացքի, իսկ ընթացիկ տարվա ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի գործունեության ծրագրի կատարման մասին:

3. Հանրապետական գործադիր մարմինների ղեկավարներին՝ յուրաքանչյուր եռամսյակի ավարտից հետո 10-օրյա ժամկետում Հայաստանի Հանրապետության կառավարություն ներկայացնել տեղեկանք տվյալ եռամսյակում սույն որոշման N 2 հավելվածում նշված գերակա խնդիրների լուծման միջոցառումների իրականացման ընթացքի մասին:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ

Ս. ՍԱՐԳՍՅԱՆ

2007 թ. դեկտեմբերի 18
Երևան

Ծ Ր Ա Գ Ի Ր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2008 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

Միջոցառման անվանումը	Նպատակը	Կատարողը	Ժամկետը	Ֆինանսական ապահովումը
1	2	3	4	5
1. «2008 թվականի պետական նպաստների չափերը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	պետական նպաստների համար 2008 թվականի ՀՀ պետական բյուջեով նախատեսված միջոցների բաշխում	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	2008 թ. հունվարի 2-րդ տասնօրյակ	ՀՀ պետական բյուջե
2. «Բնապահպանական իրավախախտումների հետևանքով կենդանական և բուսական աշխարհին պատճառված վնասի հատուցման սակագների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը (2005 թվականի մայիսի 3-ի ՀՕ-88-Ն) ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը		ՀՀ բնապահպանության նախարարություն	2008 թ. հունվարի 2-րդ տասնօրյակ	ՀՀ պետական բյուջեով նախատեսված 2008 թ. պահպանման միջոցներ

1	2	3	4	5
<p>3. «Համայնքի ղեկավարին պետության պատվիրակած՝ սոցիալական օգնության ծառայության գործունեության կազմակերպման լիազորության իրականացման տարեկան ծախսերի նորմատիվները հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարությունն ներկայացնելը</p>	<p>«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասի կատարման ապահովում</p>	<p>ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն</p>	<p>2008 թ. հունվարի 3-րդ տասնօրյակ</p>	<p>ՀՀ պետական բյուջե</p>
<p>4. «Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 11-ի N 1907-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարությունն ներկայացնելը</p>	<p>ՀՀ առողջապահության նախարարության աշխատակազմի պետական հիգիենիկ և հակահամաճարակային տեսչության քաղաքացիական աշխատանք կատարող բժիշկ-հիգիենիստները, բժիշկ-համաճարակաբանները և հանրային առողջության ոլորտի բժիշկ-մասնագետներն ու համաճարակաբանի օգնականները կօգտվեն ՀՀ կառավարության 2003 թ. դեկտեմբերի 11-ի N 1907-Ն որոշմամբ հաստատված արտոնությունից, հետագայում նաև ՀՀ կառավարության 2005 թ. օգոստոսի 11-ի N 1599-Ն որոշման արտոնությունից</p>	<p>ՀՀ առողջապահության նախարարություն ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն</p>	<p>2008 թ. փետրվարի 1-ին տասնօրյակ</p>	<p>Ֆինանսավորում չի պահանջվում</p>

1	2	3	4	5
<p>5. «Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը</p>	<p>բազմաբնակարան շենքերին կից ինքնակամ իրականացված կառույցների օրինականացման, օրինականացման վճարները սահմանված ժամկետում չվճարված կառույցների հետագա տնօրինման մեխանիզմների հստակեցում, ինքնակամ կառույցների օրինականացման առանձնահատկությունների սահմանումն ըստ ավարտվածության աստիճանի, պետական կամ համայնքային հողամասերում օրինականացված շենք, շինությունների օտարման գների նկատմամբ գործակիցների կիրառման վերանայում և իրավահարաբերությունների ամբողջական կարգավորում</p>	<p>ՀՀ կառավարությանն առընթերանշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե</p>	<p>2008 թ. փետրվարի 1-ին տասնօրյակ</p>	
<p>6. «Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի մարտի 24-ի «Մաքսային հսկողության մեթոդիկան սահմանելու մասին» N 236 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը</p>	<p>համակարգչային նոր ծրագրի արդյունքում մաքսային հսկողության կատարելագործում</p>	<p>ՀՀ կառավարությանն առընթեր մաքսային պետական կոմիտե</p>	<p>2008 թ. փետրվարի 1-ին տասնօրյակ</p>	
<p>7. «Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը</p>	<p>պետական կենսաթոշակների նշանակումը և վճարումը կանոնակարգող դրույթների հստակեցում</p>	<p>ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն</p>	<p>2008 թ. փետրվարի 2-րդ տասնօրյակ</p>	<p>ՀՀ պետական բյուջե</p>

1	2	3	4	5
<p>8. «Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի փետրվարի 22-ի N 314-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը</p>	<p>ՀՀ կառավարության ծրագրի 4.3.11.1-ին կետի չորրորդ պարբերության պահանջի կատարում</p>	<p>ՀՀ էներգետիկայի նախարարություն</p>	<p>2008 թ. փետրվարի 2-րդ տասնօրյակ</p>	
<p>9. «Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի ապրիլի 23-ի N 572-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի դեկտեմբերի 5-ի N1932-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշումների նախագծերը ՀՀ կառավարություն ներկայացնելը</p>	<p>ՀՀ աշխատանքի շուկայի վերլուծության մեխանիզմների կատարելագործում և վերլուծության համար անհրաժեշտ տեղեկատվության ձեռքբերման աղբյուրների հստակեցում</p>	<p>ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն</p>	<p>2008 թ. փետրվարի 3-րդ տասնօրյակ</p>	<p>ՀՀ պետական բյուջե</p>
<p>10. «Տեսողության խնդիրներ ունեցող անձանց «Արև» համակարգի ուսուցման և համակարգչային տեխնիկայի տրամադրման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը</p>	<p>տեսողության խնդիրներ ունեցող անձանց հասարակություն ինտեգրելու նպատակով նրանց համար համակարգչային ուսուցման կազմակերպում և անվճար համակարգիչների տրամադրում</p>	<p>ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն</p>	<p>2008 թ. փետրվարի 3-րդ տասնօրյակ</p>	<p>ՀՀ պետական բյուջե</p>

1	2	3	4	5
<p>11. «Նախադպրոցական կրթության բարեփոխումների 2008-2015 թվականների ռազմավարության ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը</p>	<p>Նախադպրոցական կրթության մատչելիության ապահովում</p>	<p>ՀՀ կրթության և գիտության նախարարություն</p>	<p>2008 թ. փետրվարի 3-րդ տասնօրյակ</p>	
<p>12. «Հայաստանի Հանրապետության 2008 թվականի պետական բյուջեով նախատեսված հատկացումների հաշվին բնակարանների գնման վկայագրերի տրամադրման միջոցով բնակարանային ապահովման ծրագրի մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը</p>	<p>ՀՀ 2008 թ. պետական բյուջեով նախատեսված՝ բնակարանային ապահովում՝ բնակարանների գնման վկայագրերի տրամադրման միջոցով ծախսային ծրագրի շահառուների և նրանց աջակցության տրամադրման հետ կապված քայլերի հստակեցում</p>	<p>ՀՀ քաղաքաշինության նախարարություն</p>	<p>2008 թ. փետրվարի 3-րդ տասնօրյակ</p>	
<p>13. «Կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից ներմուծվող մաքսատուրքի 0 տոկոս դրույքաչափ ունեցող և ակցիզային հարկով հարկման ոչ ենթակա այն ապրանքների ցանկը հաստատելու մասին, որոնցից ավելացված արժեքի հարկը մաքսային մարմինների կողմից չի հաշվարկվում և գանձվում» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը</p>	<p>ՀՀ տոհմային ծագում ունեցող կենդանիների ներկրման խթանում, որը կնպաստի հանրապետությունում տավարաբուծության հետագա զարգացմանը</p>	<p>ՀՀ գյուղատնտեսության նախարարություն</p>	<p>2008 թ. փետրվարի 3-րդ տասնօրյակ</p>	

1	2	3	4	5
<p>14. «Համայնքի բյուջեի ֆոնդային մասից վարչական մաս ֆինանսական հատկացումների տրամադրման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը</p>	<p>վարչական բյուջեի դեֆիցիտի (պակասուրդի) ֆինանսավորման նպատակով ֆոնդային բյուջեի ժամանակավոր ազատ միջոցների հատկացումներ</p>	<p>ՀՀ տարածքային կառավարման նախարարություն</p>	<p>2008 թ. փետրվարի 3-րդ տասնօրյակ</p>	
<p>15. «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը</p>		<p>ՀՀ բնապահպանության նախարարություն</p>	<p>2008 թ. փետրվարի 3-րդ տասնօրյակ</p>	<p>ՀՀ պետական բյուջեով նախատեսված 2008 թ. պահպանման միջոցներ</p>
<p>16. «Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թվականի հունիսի 16-ի N 983-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը</p>	<p>աշխատուժի ներքին տեղաշարժի կարգավորմանն ուղղված ծրագրի իրականացման արդյունավետության բարձրացում և աշխատաշուկայի ճկունության ապահովում</p>	<p>ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն</p>	<p>2008 թ. մարտի 1-ին տասնօրյակ</p>	<p>ՀՀ պետական բյուջե</p>

1	2	3	4	5
<p>17. «2008/2009 ուսումնական տարվա ասպիրանտուրայի և դոկտորանտուրայի ընդունելության տեղերի քվաքանակը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարությունն ներկայացնելը</p>	<p>ՀՀ պետական բուհերում և գիտական կազմակերպություններում հետբուհական կրթության և գիտահետազոտական աշխատանքների ապահովում</p>	<p>ՀՀ կրթության և գիտության նախարարություն</p> <p>ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտե</p>	<p>2008 թ. մարտի 1-ին տասնօրյակ</p>	<p>ՀՀ պետական բյուջե</p>
<p>18. «Որսորդական կարիքների, կենդանական աշխարհի օգտագործման և վերարտադրության կազմակերպման նպատակով պաշտպանական, արտադրական և հատուկ նշանակության պետական և համայնքային անտառներում անտառային հողերից օգտվելու կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարությունն ներկայացնելը</p>	<p>ՀՀ անտառային օրենսգրքի կիրարկման ապահովում, ՀՀ անտառային օրենսգրքի 39-րդ հոդվածի պահանջների կատարում</p>	<p>ՀՀ գյուղատնտեսության նախարարություն</p>	<p>2008 թ. մարտի 1-ին տասնօրյակ</p>	

1	2	3	4	5
<p>19. «Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի փետրվարի 13-ի N 120 որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը</p>	<p>Օտարերկրյա պետություններում գործող ՀՀ դիվանագիտական ծառայության մարմիններում ծառայող դիվանագետի ծառայության հետ կապված ծախսերի ամսական փոխհատուցման վճարման կարգի պարզեցում</p>	<p>ՀՀ արտաքին գործերի նախարարություն</p>	<p>2008 թ. մարտի 1-ին տասնօրյակ</p>	<p>ՀՀ պետական բյուջեում ՀՀ արտաքին գործերի նախարարության համար նախատեսված միջոցների շրջանակներում</p>
<p>20. «Հայաստանի Հանրապետության պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների առկա ուսուցման 2008/2009 ուսումնական տարվա (բակալավրիատի), ըստ մասնագիտությունների, պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) և բարձրագույն ուսումնական հաստատությունների կողմից ուսման վարձի մասնակի զեղչի կիրառման իրավունքով (վճարովի) տեղերը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը</p>	<p>ՀՀ քաղաքացիների՝ կրթություն ստանալու սահմանադրական իրավունքի ապահովում</p>	<p>ՀՀ կրթության և գիտության նախարարություն</p>	<p>2008 թ. մարտի 2-րդ տասնօրյակ</p>	

1	2	3	4	5
<p>21. «Հայաստանի Հանրապետության պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների առկա ուսուցման 2008/2009 ուսումնական տարվա (մագիստրատուրայի), ըստ մասնագիտությունների, պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) տեղերը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը</p>	<p>ՀՀ քաղաքացիների՝ կրթություն ստանալու սահմանադրական իրավունքի ապահովում</p>	<p>ՀՀ կրթության և գիտության նախարարություն</p>	<p>2008 թ. մարտի 2-րդ տասնօրյակ</p>	
<p>22. «Հայաստանի Հանրապետությունում իրականացվող բժշկական օգնության և սպասարկման տեսակների ցանկը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը</p>	<p>ՀՀ-ում բժշկական օգնության և սպասարկման տեսակների ցանկի համապատասխանեցում բժշկագիտության ներկա պահանջներին</p>	<p>ՀՀ առողջապահության նախարարություն</p>	<p>2008 թ. մարտի 2-րդ տասնօրյակ</p>	<p>Ֆինանսավորում չի պահանջվում</p>

1	2	3	4	5
23. «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	ընթացակարգերի պարզեցում, չափորոշիչների ճշգրտում, գործարարի համար տեխնիկական անվտանգության պահանջների կատարման առավել ընդունելի պայմանների ապահովում	ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարություն	2008 թ. մարտի 2-րդ տասնօրյակ	
24. «Հայաստանի Հանրապետության առևտրի և տնտեսական զարգացման նախարարության եռամյա ռազմավարությունը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարության առաքելության, նպատակների և ռազմավարական խնդիրների սահմանում	ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարություն	2008 թ. մարտի 2-րդ տասնօրյակ	
25. «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	կանխամտածված և չարամտորեն հարկային կարգապահության խախտումների համար նախատեսված պատասխանատվության միջոցների խստացում, մասնավորապես, միջազգային փորձի ուսումնասիրման հիման վրա վաղեմության ժամկետի վերանայում և հարկման տեսանկյունից «սուբսիդիար» պատասխանատվության դրույթների կիրառում	ՀՀ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայություն	2008 թ. մարտի 3-րդ տասնօրյակ	ՀՀ պետական բյուջե
26. «Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	միջազգային չափանիշներին համապատասխան անձնագրային նոր համակարգի ներդրում	ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանություն	2008 թ. մարտի 3-րդ տասնօրյակ	

1	2	3	4	5
27. «Քաղաքացիական հատուկ ծառայության և զինվորական ծառայության հավասարազոր պաշտոնների ցանկը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	Նախկին զինծառայողներին քաղաքացիական հատուկ ծառայության պաշտոնի նշանակելու հետ կապված խնդիրների լուծում	ՀՀ պաշտպանության նախարարություն	2008 թ. մարտի 3-րդ տասնօրյակ	
28. «Առանձին գործող ավագ դպրոցների ցանցի ստեղծման մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	հանրակրթության որակի և մատչելիության ապահովում	ՀՀ կրթության և գիտության նախարարություն	2008 թ. մարտի 3-րդ տասնօրյակ	
29. «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում և փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	«Մշակութային արժեքների արտահանման և ներմուծման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջի կատարում	ՀՀ մշակույթի նախարարություն	2008 թ. մարտի 3-րդ տասնօրյակ	
30. «Ասիական զարգացման բանկի՝ ջրամատակարարման և ջրահեռացման (սեկտորի) ծրագրի իրականացման ապահովմանն ուղղված միջոցառումները հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	մի շարք բնակավայրերի ջրամատակարարման և ջրահեռացման բարելավմանն ուղղված՝ ջրամատակարարման և ջրահեռացման (սեկտորի) ծրագրի իրականացման ապահովում	ՀՀ տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտե	2008 թ. մարտի 3-րդ տասնօրյակ	

1	2	3	4	5
<p>31. «Լոռի-ջրնուղկոյուղի», «Շիրակ-ջրնուղկոյուղի» և «Նոր-Ակունք» փակ բաժնետիրական ընկերությունների ջրային համակարգերի կառավարման իրավունքը ոչ պետական կառավարչին հանձնելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը</p>	<p>ընկերությունների կառավարմանը ոչ պետական կառավարչի ներգրավման գործընթացների կազմակերպում</p>	<p>ՀՀ տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտե</p>	<p>2008 թ. մարտի 3-րդ տասնօրյակ</p>	
<p>32. «Մաքսային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը</p>	<p>ՀՀ աշխատանքային օրենսգրքի դրույթների համապատասխանեցում</p>	<p>ՀՀ կառավարությանն առընթեր մաքսային պետական կոմիտե</p>	<p>2008 թ. մարտի 3-րդ տասնօրյակ</p>	
<p>33. «Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի նոյեմբերի 21-ի N 1888-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը</p>	<p>բույսերի կարանտինի և երկրագործության ոլորտում իրականացվող գործառույթների հստակեցում</p>	<p>ՀՀ գյուղատնտեսության նախարարություն</p>	<p>2008 թ. մարտի 3-րդ տասնօրյակ</p>	

1	2	3	4	5
34. «Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի նոյեմբերի 9-ի N 1901-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	ՀՀ ներկրվող և ՀՀ-ից արտահանվող տոհմանյութի հավաստագրման գործընթացի հստակեցում	ՀՀ գյուղատնտեսության նախարարություն	2008 թ. մարտի 3-րդ տասնօրյակ	
35. «Պետական գույքի մասնավորեցման 2006-2007 թվականների ծրագրի կատարման 2007 թվականի տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	«Պետական գույքի մասնավորեցման (սեփականաշնորհման) մասին» ՀՀ օրենքի 4-րդ և 12-րդ հոդվածների պահանջների կատարում	ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն	2008 թ. ապրիլի 1-ին տասնօրյակ	
36. «Գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման հայեցակարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման անհրաժեշտության հիմնավորում և ակնկալվող արդյունքների գնահատում	ՀՀ գյուղատնտեսության նախարարություն	2008 թ. ապրիլի 1-ին տասնօրյակ	
37. «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի դրույթների և Ընտրական օրենսգրքի համապատասխանեցում	ՀՀ տարածքային կառավարման նախարարություն	2008 թ. ապրիլի 1-ին տասնօրյակ	

1	2	3	4	5
<p>38. «Սեյսմիկ պաշտպանության ազգային ծառայության համակարգի բարեփոխումների մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը</p>	<p>սեյսմիկ պաշտպանության ոլորտի աշխատանքների բարելավում, գործառույթների առավել արդյունավետ իրականացում</p>	<p>ՀՀ տարածքային կառավարման նախարարություն</p>	<p>2008 թ. ապրիլի 1-ին տասնօրյակ</p>	
<p>39. «Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը</p>	<p>մարդու համընդհանուր ճանաչում գտած իրավունքների և միջազգայնորեն ընդունված նորմերին համապատասխան ՀՀ-ում ապաստան հայցողների համակարգի կատարելագործում</p> <p>ՀՀ կառավարության 2007թ. հունիսի 21-ի N 695-Ա որոշմամբ հավանության արժանացած ժրագրի 4.4.8-րդ ենթակետի վերջին պարբերություն</p>	<p>ՀՀ տարածքային կառավարման նախարարություն</p>	<p>2008 թ. ապրիլի 1-ին տասնօրյակ</p>	
<p>40. «Հայաստանի Հանրապետության երիտասարդական պետական քաղաքականության 2008-2012 թվականների ռազմավարության մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը</p>	<p>երիտասարդական պետական քաղաքականության իրականացման ապահովում</p>	<p>ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն</p>	<p>2008 թ. ապրիլի 2-րդ տասնօրյակ</p>	

1	2	3	4	5
<p>41. «Հայաստանի Հանրապետությունում երկնակարգակա աստիճանաշնորհման համակարգի զարգացման ծրագրին և ժամանակացույցին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը ՀՀ կառավարությունն ներկայացնելը</p>	<p>աստիճանաշնորհման արդիական համակարգի ձևավորում</p>	<p>ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտե</p>	<p>2008 թ. ապրիլի 2-րդ տասնօրյակ</p>	
<p>42. «Հաշվառման տվյալների փոփոխություն նախատեսող և առանց համապատասխան թույլտվության վերասարքավորված տրանսպորտային միջոցների վերահաշվառման թույլտվություն տալու կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարությունն ներկայացնելը</p>	<p>հաշվառման տվյալների փոփոխություն նախատեսող և առանց համապատասխան թույլտվության վերասարքավորված տրանսպորտային միջոցների վերահաշվառման թույլտվություն տալու կարգի սահմանում</p>	<p>ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանություն</p>	<p>2008 թ. ապրիլի 3-րդ տասնօրյակ</p>	
<p>43. «Ոստիկանության ծառայողների բնակարանային ապահովության մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարությունն ներկայացնելը</p>	<p>ՀՀ ոստիկանության ծառայողների բնակարանային իրավունքի երաշխիքների ամրագրում՝ համաձայն «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի պահանջի</p>	<p>ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանություն</p>	<p>2008 թ. ապրիլի 3-րդ տասնօրյակ</p>	

1	2	3	4	5
<p>44. «Պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը</p>	<p>ՀՀ պաշտպանության նախարարության և զինված ուժերի գլխավոր շտաբի լիազորությունների տարանջատում, պաշտպանության ոլորտում ՀՀ Նախագահի, ՀՀ Ազգային ժողովի և ՀՀ կառավարության իրավասությունների հստակեցում</p>	<p>ՀՀ պաշտպանության նախարարություն</p>	<p>2008 թ. ապրիլի 3-րդ տասնօրյակ</p>	
<p>45. «Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկ ստեղծելու, Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության կանոնադրությունը և աշխատակազմի կառուցվածքը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը</p>	<p>ՀՀ պաշտպանության նախարարության համակարգի համապատասխանեցում ՀՀ օրենսդրությամբ պետական կառավարման մարմինների համակարգին և կառուցվածքին առաջադրվող պահանջներին</p>	<p>ՀՀ պաշտպանության նախարարություն</p>	<p>2008 թ. ապրիլի 3-րդ տասնօրյակ</p>	

1	2	3	4	5
<p>46. «Պետական ծառայողների կենսաթոշակային ապահովության մասին», «Մաքսային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Դիվանագիտական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» և «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի փաթեթը ՀՀ կառավարություն ներկայացնելը</p>	<p>պետական ծառայողների կենսաթոշակային ապահովության խնդիրների լուծում</p>	<p>ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն</p>	<p>2008 թ. ապրիլի 3-րդ տասնօրյակ</p>	<p>ՀՀ պետական բյուջե</p>
<p>47. «Կենսաթոշակային համակարգի մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը</p>	<p>բազմաստիճան կենսաթոշակային համակարգի բարեփոխումներ, համակարգի ներդրում</p>	<p>ՀՀ կենտրոնական բանկ ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն</p>	<p>2008 թ. ապրիլի 3-րդ տասնօրյակ</p>	<p>ՀՀ կենտրոնական բանկ օրենքով չարգելված այլ միջոցներ</p>

1	2	3	4	5
<p>48. «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացելը</p>	<p>2009 թվականի հունվարի 1-ից գյուղատնտեսության ոլորտում ավելացված արժեքի հարկի արտոնության վերացման հետևանքով այդ ոլորտում՝ ավելացված արժեքի հարկով չհարկվող շեմի, նվազագույն դրույքաչափի սահմանում</p>	<p>ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն ՀՀ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայություն ՀՀ գյուղատնտեսության նախարարություն ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարություն</p>	<p>2008 թ. ապրիլի 3-րդ տասնօրյակ</p>	
<p>49. «Բույսերի կարանտինի և բույսերի պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը</p>	<p>հանրապետությունում բույսերի պաշտպանության միջոցառումների պետական գրանցման համար անհրաժեշտ փաստաթղթերի փաթեթի ամբողջականացում և գործող օրենքի դրույթների միջազգային բուսասանիտարական չափորոշիչներին համապատասխանեցում</p>	<p>ՀՀ գյուղատնտեսության նախարարություն</p>	<p>2008 թ. ապրիլի 3-րդ տասնօրյակ</p>	

1	2	3	4	5
<p>50. «Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 22-ի N 2313-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը</p>	<p>հանրային սննդի կազմակերպություններում սննդամթերքի անվտանգության նկատմամբ ներկայացվող պահանջների հստակեցում և համապատասխանեցում «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի դրույթներին</p>	<p>ՀՀ գյուղատնտեսության նախարարություն ՀՀ առողջապահության նախարարություն</p>	<p>2008 թ. ապրիլի 3-րդ տասնօրյակ</p>	
<p>51. «Հայաստանի Հանրապետության էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի ազգային ծրագրի կատարմանն ուղղված Հայաստանի Հանրապետության կառավարության միջոցառումների ցանկը հաստատելու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը</p>	<p>ՀՀ կառավարության 2007 թ. հունվարի 18-ի նիստի N 2 արձանագրության 9-րդ կետի արձանագրային որոշման կատարում</p>	<p>ՀՀ էներգետիկայի նախարարություն</p>	<p>2008 թ. ապրիլի 3-րդ տասնօրյակ</p>	
<p>52. «Սահմանամերձ տարածաշրջանների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը</p>	<p>օրենքի 3-րդ հոդվածի, մասնավորապես, սահմանամերձ տարածաշրջանների նկատմամբ վարվող պետական քաղաքականության ծրագրային հիմունքների հստակեցում և լրամշակում</p>	<p>ՀՀ տարածքային կառավարման նախարարություն</p>	<p>2008 թ. ապրիլի 3-րդ տասնօրյակ</p>	

1	2	3	4	5
<p>53. «Յետախուզվող ավտոտրանսպորտային միջոցների հաշվառման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը</p>	<p>հետախուզվող ավտոտրանսպորտային միջոցների հաշվառման կանոնակարգում՝ համաձայն «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի և ՀՀ կառավարության 2002 թվականի սեպտեմբերի 12-ի N 1566-Ն որոշման պահանջների</p>	<p>ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանություն</p>	<p>2008 թ. մայիսի 1-ին տասնօրյակ</p>	
<p>54. «Արհեստագործական ուսումնարաններ հիմնադրելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը</p>	<p>ՀՀ մարզերի արդյունաբերական կազմակերպությունների և գյուղատնտեսության ոլորտի ապահովում՝ երիտասարդ բանվորական կադրերով</p>	<p>ՀՀ կրթության և գիտության նախարարություն</p>	<p>2008 թ. մայիսի 1-ին տասնօրյակ</p>	<p>ներառված է ՀՀ 2007-2009 թթ. պետական միջ-նաժամկետ ծախսային ծրագրում</p>
<p>55. «Հայաստանի Հանրապետության երկրատեղեկատվական համակարգի օբյեկտների ծածկագրման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը</p>	<p>ՀՀ երկրատեղեկատվական համակարգի օբյեկտների ծածկագրում</p>	<p>ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե</p>	<p>2008 թ. մայիսի 1-ին տասնօրյակ</p>	

1	2	3	4	5
<p>56. «Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հունիսի 29-ի N 993-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը</p>	<p>սպանդանոցների դասակարգման և սպանդի կազմակերպման գործընթացի կանոնակարգում՝ ելնելով միջազգային չափանիշներից</p>	<p>ՀՀ գյուղատնտեսության նախարարություն</p>	<p>2008 թ. մայիսի 1-ին տասնօրյակ</p>	
<p>57. «Հայաստանի Հանրապետության միջին և նախնական մասնագիտական կրթական ծրագրերի իրականացնող պետական ուսումնական հաստատությունների անվճար ուսուցման (նպաստի ձևով փոխհատուցման) 2008/2009 ուսումնական տարվա ընդունելության տեղերը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը</p>	<p>ՀՀ քաղաքացիների՝ կրթություն ստանալու սահմանադրական իրավունքի ապահովում</p>	<p>ՀՀ կրթության և գիտության նախարարություն</p>	<p>2008 թ. մայիսի 2-րդ տասնօրյակ</p>	<p>ՀՀ պետական բյուջե</p>
<p>58. «Հայաստանի Հանրապետության բնակչության առողջության առաջնային պահպանման 2008-2013 թվականների ռազմավարության և դրա իրականացման միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը</p>	<p>2003-2008 թթ. ռազմավարությամբ նախանշված առողջության առաջնային պահպանման զարգացման ուղղությունների ամրագրում, ինչպես նաև առողջության առաջնային պահպանման համակարգի որակյալ և արդյունավետ գործունեության համակարգում, մատչելիության և հավասարության ապահովում</p>	<p>ՀՀ առողջապահության նախարարություն</p>	<p>2008 թ. մայիսի 2-րդ տասնօրյակ</p>	<p>Ֆինանսավորում չի պահանջվում</p>

1	2	3	4	5
<p>59. «Սոցիալապես անապահով ընտանիքների բնակարանային պայմանների բարելավման հայեցակարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը</p>	<p>սոցիալապես անապահով ընտանիքների բնակարանային պայմանների բարելավման սահմանադրական իրավունքի իրականացմանն ուղղված պետական քաղաքականության հետագա քայլերի հստակեցում</p>	<p>ՀՀ քաղաքաշինության նախարարություն ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն</p>	<p>2008 թ. մայիսի 2-րդ տասնօրյակ</p>	
<p>60. «Գյուղատնտեսական կենդանիների կարանտինի սահմանման և չեղյալ հայտարարման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը</p>	<p>գյուղատնտեսական կենդանիների վարակիչ հիվանդությունների կանխարգելում, անասնահամաճարակների կանխման նախադրյալների ստեղծում</p>	<p>ՀՀ գյուղատնտեսության նախարարություն</p>	<p>2008 թ. մայիսի 2-րդ տասնօրյակ</p>	
<p>61. «Ժամանակավոր անաշխատունակության դեպքերից պարտադիր սոցիալական ապահովագրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը</p>	<p>Ժամանակավոր անաշխատունակության նպաստների նշանակումը և վճարումը կանոնակարգող դրույթների հստակեցում</p>	<p>ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն</p>	<p>2008 թ. մայիսի 3-րդ տասնօրյակ</p>	<p>ՀՀ պետական բյուջե</p>

1	2	3	4	5
<p>62. «Հայջրնուղկոյուղի» փակ բաժնետիրական ընկերության հավատարմագրային կառավարման պայմանագրի ժամկետի ավարտից հետո իրականացվելիք միջոցառումների մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարությունն ներկայացնելը</p>	<p>«Հայջրնուղկոյուղի» փակ բաժնետիրական ընկերության հավատարմագրային կառավարման պայմանագրի ժամկետի ավարտից հետո ընկերության ջրային համակարգերի կառավարման ձևի ընտրություն</p>	<p>ՀՀ տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտե</p>	<p>2008 թ. մայիսի 3-րդ տասնօրյակ</p>	
<p>63. «Գյուղատնտեսական նշանակության և բնակավայրերի հողերի կադաստրային զուտ եկամտի ու կադաստրային արժեքների (գների) 2008 թվականի չափերը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարությունն ներկայացնելը</p>	<p>ՀՀ հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 2-րդ կետի երկրորդ պարբերության և «Հողի հարկի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի պահանջների կատարման ապահովում</p>	<p>ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե</p>	<p>2008 թ. մայիսի 3-րդ տասնօրյակ</p>	

1	2	3	4	5
<p>64. «Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների տարածքներում բեռնատար տրանսպորտային միջոցների կշռման միջազգային հավաստագրի կիրառման մասին» համաձայնագրի պահանջների ապահովման համար իրավասու մարմին ճանաչելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարությունն Երկայացնելը</p>	<p>«Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների տարածքներում բեռնատար տրանսպորտային միջոցների կշռման միջազգային հավաստագրի կիրառման մասին» համաձայնագրի պահանջների կատարման ապահովում</p>	<p>ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն</p>	<p>2008 թ. մայիսի 3-րդ տասնօրյակ</p>	<p>Ֆինանսավորում չի պահանջվում</p>
<p>65. «Մթնոլորտի գերնորմատիվային աղտոտվածության, կլիմայի փոփոխության և օզոնային շերտի վիճակի հետ կապված վտանգավոր հիդրոօդերևութաբանական երևույթների կանխատեսման, ազդարարման և արձագանքման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարությունն Երկայացնելը</p>	<p>վտանգավոր հիդրոօդերևութաբանական երևույթների կանխատեսման, ազդարարման և արձագանքման համակարգի ստեղծում, որը թույլ կտա կանխարգելել կամ առավելագույնս կրճատել վնասակար ազդեցության հետևանքները</p> <p>ՀՀ կառավարության 2007 թվականի հունիսի 21-ի N 695-Ա որոշմամբ հաստատված ծրագրի 4.3.10-րդ կետի առաջին և երրորդ պարբերությունների պահանջների կատարման ապահովում</p>	<p>ՀՀ բնապահպանության նախարարություն</p>	<p>2008 թ. մայիսի 3-րդ տասնօրյակ</p>	

1	2	3	4	5
<p>66. «Սահմանային և ռազմական նշանակության անտառների և անտառային հողերի օգտագործման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարությունն ներկայացնելը</p>	<p>ՀՀ անտառային օրենսգրքի կիրարկման ապահովում</p> <p>ՀՀ անտառային օրենսգրքի 43-րդ հոդվածի պահանջների կատարում</p>	<p>ՀՀ գյուղատնտեսության նախարարություն</p>	<p>2008 թ. մայիսի 3-րդ տասնօրյակ</p>	
<p>67. «Արտաքին աղբյուրներից ներգրավվող վարկային միջոցների արտոնյալության աստիճանի գնահատման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարությունն ներկայացնելը</p>	<p>արտաքին աղբյուրներից փոխառու միջոցների ներգրավման քաղաքականության հստակեցում</p>	<p>ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն</p>	<p>2008 թ. հունիսի 1-ին տասնօրյակ</p>	
<p>68. «Սեյսմիկ պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարությունն ներկայացնելը</p>	<p>«Սեյսմիկ պաշտպանության մասին» ՀՀ օրենքի մի շարք հասկացությունների և դրույթների հստակեցում</p>	<p>ՀՀ տարածքային կառավարման նախարարություն</p>	<p>2008 թ. հունիսի 1-ին տասնօրյակ</p>	

1	2	3	4	5
<p>69. «Գիտական կենտրոններ ստեղծելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը</p>	<p>պետական գիտական կազմակերպությունների գործունեության արդյունավետության բարձրացում</p>	<p>ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտե</p> <p>ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա</p>	<p>2008 թ. հունիսի 2-րդ տասնօրյակ</p>	
<p>70. «Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի հունիսի 28-ի N 1067-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը</p>	<p>պետական պատվերի շրջանակներում հաշմանդամների համար երաշխավորված ծառայությունների ցանկի ընդլայնում</p>	<p>ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն</p>	<p>2008 թ. հունիսի 2-րդ տասնօրյակ</p>	<p>ՀՀ պետական բյուջե</p>
<p>71. «Հայաստանի Հանրապետության մարզերի բժշկական հաստատությունները բժիշկ-մասնագետներով համալրելու կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը</p>	<p>ՀՀ մարզերի բժշկական հաստատություններն անհրաժեշտ կադրերով համալրում, ազգաբնակչության բժշկական սպասարկման որակի բարելավում</p>	<p>ՀՀ առողջապահության նախարարություն</p>	<p>2008 թ. հունիսի 2-րդ տասնօրյակ</p>	<p>Ֆինանսավորում չի պահանջվում</p>

1	2	3	4	5
72. «Մշակութային ժառանգության հանրահռչակման ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարությունն ներկայացնելը	ՀՀ կառավարության 2007 թ. հունիսի 21-ի N 695-Ա որոշման «4.4.4. Մշակույթ» բաժնի կատարման մշակութային արժեքներին հաղորդակցվելու մատչելիության ապահովում	ՀՀ մշակույթի նախարարություն	2008 թ. հունիսի 2-րդ տասնօրյակ	
73. «Հափշտակված հնաոճ առարկաների և մշակութային արժեքների հաշվառման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարությունն ներկայացնելը	հափշտակված հնաոճ առարկաների և մշակութային արժեքների հաշվառման կանոնակարգում՝ համաձայն «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի և ՀՀ կառավարության 2002 թվականի սեպտեմբերի 12-ի N 1566-Ն որոշման պահանջների	ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանություն	2008 թ. հունիսի 3-րդ տասնօրյակ	
74. «Քաղաքացիական հատուկ ծառայողների վարձատրության մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարությունն ներկայացնելը	ՀՀ պաշտպանության նախարարության համակարգում քաղաքացիական հատուկ ծառայության ներդրման հետ կապված նշված ծառայողների վարձատրությանը վերաբերող հարաբերությունների կարգավորում	ՀՀ պաշտպանության նախարարություն	2008 թ. հունիսի 3-րդ տասնօրյակ	
75. «Հայաստանի Հանրապետության մաքսային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարությունն ներկայացնելը	մաքսային վարչարարության կատարելագործում	ՀՀ կառավարությանն առընթեր մաքսային պետական կոմիտե	2008 թ. հունիսի 3-րդ տասնօրյակ	

1	2	3	4	5
<p>76. «Շրջակա միջավայրի պահպանության գործողությունների երկրորդ ազգային ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը</p>	<p>շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների կայուն կառավարման համար համալիր և ներդաշնակ գործողությունների իրականացման մեխանիզմի սահմանում ՀՀ կառավարության 2007 թվականի հունիսի 21-ի N 695-Ա որոշմամբ հաստատված ծրագրի 4.3.10-րդ կետի առաջին պարբերության պահանջի կատարման ապահովում</p>	<p>ՀՀ բնապահպանության նախարարություն</p>	<p>2008 թ. հունիսի 3-րդ տասնօրյակ</p>	
<p>77. «Զբոսաշրջության զարգացման հայեցակարգից բխող միջոցառումների ցանկը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը</p>	<p>զբոսաշրջության ոլորտում մատուցվող ծառայությունների որակի ապահովման, Հայաստանի, որպես զբոսաշրջության համար բարենպաստ և գրավիչ երկրի, նկարագրի ձևավորման և միջազգային շուկայում ամրապնդման միջոցով զբոսաշրջության զարգացում և զբոսաշրջային արդյունքի մրցունակության բարձրացում</p>	<p>ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարություն</p>	<p>2008 թ. հունիսի 3-րդ տասնօրյակ</p>	
<p>78. «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը</p>	<p>իրավական ակտերի նախագծերի մշակման աշխատանքների որակի բարելավում</p>	<p>ՀՀ արդարադատության նախարարություն</p>	<p>2008 թ. հունիսի 3-րդ տասնօրյակ</p>	<p>ՀՀ պետական բյուջե</p>

1	2	3	4	5
<p>79. «Օդային երթևեկության սպասարկման և հարակից միջոցների ապահովման ծառայություններ մատուցող կազմակերպություններին ու նարմիններին թույլտվություններ տալու կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը</p>	<p>օդային երթևեկության սպասարկման և հարակից միջոցների ապահովման ծառայություններ մատուցող կազմակերպությունների ու նարմինների կողմից մատուցվող ծառայությունների որակի համապատասխանեցում Քաղաքացիական ավիացիայի միջազգային կազմակերպության (ԻԿԱՕ) չափանիշներին և «Ավիացիայի մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջի կատարում</p>	<p>ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչություն</p>	<p>2008 թ. հունիսի 3-րդ տասնօրյակ</p>	
<p>80. «Հայաստանի Հանրապետության սահմանամերձ համայնքների ցանկը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նոր նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը</p>	<p>ՀՀ կառավարության 1998 թ. նոյեմբերի 17-ի N 713 որոշմամբ հաստատվել է սահմանամերձ տարածաշրջանների ցանկը, սակայն համայնքները դասակարգված չեն ըստ բնակչության թվի և բարձրադիրության: Նախատեսվում է, հիմք ընդունելով «Պետական սահմանի մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածը, հաստատել բարձր լեռնային, լեռնային, մինչև 500, մինչև 1000 բնակիչ ունեցող համայնքների ցանկը</p>	<p>ՀՀ տարածքային կառավարման նախարարություն ՀՀ մարզպետարաններ</p>	<p>2008 թ. հունիսի 3-րդ տասնօրյակ</p>	
<p>81. «Հայաստանի Հանրապետության ֆիզիկական կուլտուրայի և սպորտի զարգացման 2008-2012 թվականների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը</p>	<p>Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի զարգացման պետական քաղաքականության իրականացման ապահովում</p>	<p>ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն</p>	<p>2008 թ. հունիսի 1-ին տասնօրյակ</p>	

1	2	3	4	5
<p>82. «Հողերի միավորման (կոնսոլիդացիայի) մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարությունը ներկայացնելը</p>	<p>համայնքի կայուն տնտեսական զարգացմանը, համեմատաբար արժեքավոր և իրացվելիության ավելի բարձր մակարդակ ունեցող հողամասերի կազմավորման ու գյուղատնտեսական նշանակության հողի շուկայի զարգացման աջակցման ապահովում</p>	<p>ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե</p>	<p>2008 թ. հունիսի 1-ին տասնօրյակ</p>	
<p>83. «Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարությունը ներկայացնելը</p>	<p>«Հողերի միավորման (կոնսոլիդացիայի) մասին» ՀՀ օրենքի ընդունման կապակցությամբ ՀՀ հողային օրենսգրքում համապատասխան փոփոխության կատարում</p>	<p>ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե</p>	<p>2008 թ. հունիսի 1-ին տասնօրյակ</p>	
<p>84. «Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարի ներդրման մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարությունը ներկայացնելը</p>	<p>ավելացված արժեքի հարկ վճարողների առանձին հաշվառման, ավելացված արժեքի հարկ վճարողների կողմից դուրս գրված հարկային հաշիվների հաշվառման, հանդիպակաց ստուգումների մեխանիզմների կատարելագործման և ավելացված արժեքի հարկի վարչարարության կատարելագործման նպատակով ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համակարգի ներդրում</p>	<p>ՀՀ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայություն</p>	<p>2008 թ. հունիսի 1-ին տասնօրյակ</p>	<p>ՀՀ պետական բյուջե</p>

1	2	3	4	5
<p>85. «Կենդանական ծագում ունեցող մթերքներում անասնաբուժական դեղամիջոցների մնացորդային առավելագույն քանակները սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը</p>	<p>կենդանական ծագում ունեցող մթերքներում անասնաբուժական դեղամիջոցների կիրառման հետևանքով վերջիններիս առաջացրած առավելագույն քանակների վերահսկման ապահովում</p>	<p>ՀՀ գյուղատնտեսության նախարարություն</p>	<p>2008 թ. հուլիսի 1-ին տասնօրյակ</p>	
